

**ՀՀ Արագածոտնի մարզպետ Աշոտ Միմոնյանի ելույթը Անկախության 26-ամյակին
նվիրված հանդիսության ժամանակ**

Գերաշնորհ Սրբազան Հայր

Հարգարժան քաղաքապետեր, համայնքի ղեկավարներ

Միբելի մանկավարժներ, հայրենակիցներ

Ողջունում եմ ձեզ և հղում ջերմագին շնորհավորանքներս Հայաստանի
Հանրապետության անկախության 26-րդ տարեդարձի կապակցությամբ:

1991 թ.-ի սեպտեմբերի 21-ին հայ ժողովուրդը միաձայն քվեարկեց հանուն Հայաստանի
անկախ ապագայի:

Նույն օրը Հայաստանի Գերագույն խորհուրդը ԽՍՀՄ-ից անկախանալու և անկախ
պետություն ստեղծելու որոշում ընդունեց:

Սեպտեմբերի 21-ը համազգային հպարտության տոն է, որ վկայում է հայ ազգի ուժի,
տոկունության, խոհեմության, նրա հարատևելու ունակության մասին:

Սեպտեմբերի 21-ը մեր երկար ու ձիգ պատմության ամենախիզախ օրերից է, քանզի
անկախանալու միասնական որոշումը անբեկանելի էր միանգամայն անբարենպաստ
պայմաններում՝ շրջափակում, ավերիչ երկրաշարժի դառը հետևանքներ,
պատերազմական իրավիճակ... Ո՛չ ծանր ժամանակաշրջանը, ո՛չ Առաջին
հանրապետության անկման ծանր հիշողությունները ի գորու չէին կասեցնելու մեր
առաջընթացին ուղղված քայլերը:

Սեպտեմբերի 21-ով իմաստավորվեցին հայ ժողովրդի երկարատև պայքարն ու
որոնումները, երբ վերջապես ազգովի ամրագրեցինք մեր անկախ ապրելու իրավունքը՝
համակվելով անմնացորդ սիրով հայրենիքը զարգացնելու և հզորացնելու կամքով,
ապագայի հանդեպ անշեղ հավատով:

Միբելի՝ հայրենակիցներ,

Մեր 26-ամյա երիտասարդ պետությունը բարդ աշխարհաքաղաքական պայմաններում անցել է անկախության հաստատման, ազատությունը պահպանելու դժվարին ուղի և շարունակում է երթը որպես հաղթած և զարգացող պետություն:

Արդեն քսանվեց տարի մենք քայլում ենք միայնակ՝ հասկանալով, որ ուժեղը նա է, ով չի վախենում մենակ մնալուց, ով չի վախենում դժվարություններից, մաքառելուց, զոհողություններից:

Երկար դարեր մենք պետականություն չենք ունեցել, սակայն լինելով կենսունակ ազգ՝ կարողացել ենք պահպանել մեր ազգային ինքնությունը: Բայց ժողովրդի կյանքը առանց անկախության սուկ գոյապայքար է, որը երբևէ չի կարող ուղեկցվել զարգացմամբ և հզորացմամբ: Հենց այս գիտակցությամբ բազմաթիվ փորձություններից դասեր քաղած խոհուն ժողովուրդը թևակոխեց պետականության շրջափուլ՝ անկախությունը ընդունելով որպես բարձրագույն արժեք և պատրաստ լինելով ամեն ինչ զոհաբերելու հանուն ազատ և անկախ Հայաստանի:

Անկախ Հայաստանի սիրելի՛ քաղաքացիներ, աշխարհի ամեն անկյունում ապրող հայեր, Մեզնից յուրաքանչյուրը՝ որպես անկախ պետության մասնիկ, որպես հայ մարդ, պիտի ապրի և շնչի Հայաստան երկրի, մեր պետականության շահերով:

Մեզնից յուրաքանչյուրը պարտավոր է նկատել անկախության ձեռքբերումները, զարգացման տանող բարեփոխումները, որովհետև դրական տեղաշարժերը արժևորելու շնորհիվ իմաստավորվում են մեր որոնումները, մեր ինքնուրույն գոյությունը, մեր քսանվեց տարիների համառ աշխատանքը:

Հայաստանի անկախացումից հետո՝

1. Ստեղծվեց ինքնուրույն պետական կառավարման համակարգ:
2. Դրվեցին ազգային բանակի հիմքերը: Բանակ, որն այսօր պաշտպանում է Հայաստանի և Արցախի անկախությունը:
3. Հերոսական պայքարի շնորհիվ ազատագրվեց Արցախը:
4. Հաղթեցինք ապրիլյան քառօրյա պատերազմում և շարունակում ենք զսպել թշնամու հանկարծակի ոտնձգությունները:

5. Ամրապնդվեց և հզորացավ հայրենիք-Սփյուռք կապը՝ կանխելով Սփյուռքում ահագնացող ձուլման վտանգը:

6. Շրջափակման պայմաններում գրանցվեցին տնտեսական աճի ցուցանիշներ:

7. Սահմանադրական բարեփոխումներով ամրագրվեց անցումը խորհրդարանական կառավարման համակարգի հանուն պետության կառավարման արդյունավետության:

8. Հայաստանի Հանրապետության մեծագույն նվաճումը անկախության սերունդն է, որին է պատկանում քառօրյա ռազմական գործողությունների հաղթանակի դափնին :

Մեր անկախ հանրապետության մտահոգություններն ու անելիքները շատ են ու բազմազան, սակայն մենք ընթանում ենք դժվար ու դանդաղաքայլ: Պատճառները նույնպես բազմաթիվ են:

Հայաստանի Հանրապետության գերագույն խնդիրը երկրի անվտանգությունն է, որի լուծման գրավականը տնտեսական առաջընթացն է:

Այդ ուղղությամբ՝

1. Պետք է զարգացնենք մեր ռազմական կարողությունները՝ ապահովելով Հայաստանի Հանրապետության զինված ուժերի մարտունակությունը, մշտական կատարելագործումը և արդիականացումը: Որքան էլ օգնություն ակնկալենք միջազգային անվտանգությունից, ակնհայտ է, որ հզոր հայկական բանակն է կարևոր երաշխիքը Հայաստանի Հանրապետությունում կայունություն և խաղաղություն պահպանելու հարցում:

2. Ամրապնդենք դիվանագիտական հարաբերությունները դաշնակից պետությունների հետ, ձեռք բերենք նոր դաշնակիցներ՝ վարելով բարձրակարգ արտաքին քաղաքականություն:

3. Լուծենք երկրի սոցիալ-տնտեսական խնդիրները ի նպաստ հասարակական բարեկեցության, արժանապատիվ կյանքի:

4. Զարգացնենք տնտեսությունը՝ ստեղծելով հավասար հնարավորություններ բոլորի համար:

5. Կասեցնենք արտագաղթը:

6. Ամրապնդենք Հայաստան-Սփյուռք համագործակցությունը:
7. Զարգացնենք կրթությունը՝ վերանայելով երկրում գործող կրթական համակարգը:
8. Պայքարենք երկրի մեծագույն չարիքի՝ կոռուպցիայի դեմ:

Հարգելի հայրենակիցներ,

Մեր անկախ հանրապետության բազմապիսի խնդիրների լուծման համար անհրաժեշտ են յուրաքանչյուրիս գործողությունները: Հասարակության յուրաքանչյուր անդամ պարտավոր է գիտակցել, որ հայրենիքը սկսվում է իրենից: Պետականությունը ամենօրյա պայքարի, համընդհանուր աշխատանքի, պարտականությունների չընդհատվող շղթա է:

Միրելի՛ հայ ժողովուրդ,

Կգա՞ մի օր, երբ չի լինի արտագաղթ, և աշխարհասփյուռ հայությունը կկենտրոնանա հայրենի երկրում:

Կգա՞ այն օրը, երբ տաղանդաշատ հայը իր ներուժը կօգտագործի ի նպաստ սեփական պետության զարգացման, երբ նա հնարավորություն կունենա դրսևորվելու իր երկրում:

Կգա՞ մի օր, երբ հայը կապրի ապահով, ուժեղ, հզոր և ամբողջական հայրենիքում, որին տիրելու համարձակություն չի ունենա թշնամին:

Կդառնա՞ Հայաստանը կայուն զարգացող տարածաշրջան, ազատ, ժողովրդավարական, ծաղկող և միավորված երկիր:

Կարծում եմ՝ այստեղ գտնվող բոլոր քաղաքացիները մտովի պատկերացրին և կրկին ու կրկին երազեցին գալիքի Հայաստանի մասին: Ուրեմն՝ ինչո՞ւ չմտածենք, որ մեր ներսում կասկածի քողով շղարշված իդձերը կարող են իրագործվել, ինչո՞ւ չկառուցենք այդ Հայաստանը այսօր՝ ներկայում, ինչո՞ւ չհավատանք ու համախմբված չաշխատենք: Նույն ոգևորությամբ միաձուլվենք այնպես, ինչպես անկախություն հռչակելիս, դառնանք մի ամբողջություն հնարավորությունների, կարողությունների և ներուժի միավորմամբ, սրբորեն պահենք ու սերունդներին փոխանցենք ավելի ուժեղ, ավելի հզոր հայրենիք:

Մենք պետք է այնպիսին լինենք, որ մեր պետությունը ուժեղանա, հզորանա:

Մենք պիտի դարձնենք մեր երկիրը այնպիսին, ինչպիսին ուզում ենք:

Հայոց բանակը, ժողովրդի համախմբվածությունը անկախության պահպանման երաշխիքներն են, իսկ անկախությունը երաշխիքն է հայ ժողովրդի հավերժական երթի:

Ուրեմն՝ սիրենք մեր հայրենիքը և անսասան հավատով նվիրվենք Հայաստանի Հանրապետությունը շենացնելու գործին:

Հավերժ փա'ռք բոլոր այն հայորդիներին, ովքեր կերտեցին սեպտեմբեր 21-ը:

Հավերժ փա'ռք ու խոնարհու'մ բոլոր այն նահատակների հիշատակին, ովքեր հնարավոր դարձրին սեպտեմբեր 21-ը:

Կեցցե՛ Հայաստանի Հանրապետությունը:

Կեցցե՛ Արցախի Հանրապետությունը:

Կեցցե՛ Հայկական Սփյուռքը:

Կեցցե՛ հայ ժողովրդի եռամիասնությունը: